



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

№ ԳՍ//29509-2022


«Մարզպետներին»

Հարգելի՛ գործընկերներ

Խնդրում ենք ուսումնասիրել կցված դիմումը, համագործակցել տեղական ինքնակառավարման մարմինների հետ և մինչև ս.թ. նոյեմբերի 7-ը անհրաժեշտ տեղեկատվությունը ներկայացնել «Մարադքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն»:

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:

 Invalid signature

X 

ՎԱԶԵ ՏԵՐՏԵՐՅԱՆ

Հարգանքով՝

Signed by: TERTERYAN VACHE 1201620635

/ Գ. Սանոսյան

Կատարող՝ Տեղական ինքնակառավարման քաղաքականության վարչության խորհրդական՝ առանձին գործառույթներ համակարգող, Ս. Ղահրամանյան



h.658202  
01-11-2022թ.  
Նախընտրած ծանուցման ձևը՝  
Էլ.փոստի միջոցով

Հասցեատեր՝ ՀՀ տարածքային կառավարման և  
ենթակառուցվածքների նախարարություն

Դիմող՝ ԱՆԴՐԱՆԻԿ ՈՒԳՈՒՉՅԱՆ  
ՀՀ քաղաքացի  
Հասցե՝ ԵՐԵՎԱՆ, 0006, ՇԵՆԳԱԿԻԹ,  
ՄԱՆԹԱՇՅԱՆ Փ., 51, 6  
[ugujyanandranik@gmail.com](mailto:ugujyanandranik@gmail.com) : 37441446087

## ՀԱՐՑՈՒՄ

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություններ.

Հարգելի ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածի եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկություններ հետեւյալ կետերի մասին՝ հնարավորինս հստակ եւ ամբողջական ձեւակերպմամբ, ինչպես նաեւ, **որպես ծանուցման ձեւ ընտրել Էլ.փոստը.**

1. Արդյո՞ք ՀՀ-ում առկա են լքված բնակավայրեր, նախկին բնակավայրեր, որոնք լքվում են բնակիչների կողմից տարբեր պատճառներով. տնտեսական ակտիվության անկման, պատերազմների, ցեղասպանության, բնական և տեխնոլոգիական աղետների և այլ գործոնների պատճառով, որոնք անհարմար և անհնար են դարձնում մարդկանց բնակությունը տվյալ տարածքում: Որտեղ միգրացիոն պահպանվել է արտաքին տեսքը. շենքերը և օբյեկտի ենթակառուցվածքը գտնվում են ճիշտ այն նույն ժամանակահատվածին համապատասխան, երբ լքվել էր բնակավայրը:

Հարցմանը պատասխանել հստակ՝ բոլոր կետերին անրադառնալով, լրոգված եւ անհասկանալի, երկիմաստ պատասխաններ եւ անիմաստ հղումներ, որոնք հարցման մեջ նշված կետերի պատասխանները չեն պարունակում չնշել:

**Հարցմանը պատասխանել Էլեկտրոնային տարբերակով (Էլ.փոստի միջոցով), ՀՀ-ի քաղաքացիների հարկերից գոյացած պետական միջոցները տեղեկատվությունը տպագրելու եւ փոստով ուղարկելու վրա չվատնել:**

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում

Է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Եթե տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում գրավոր՝ հստակ ձեւակերպմամբ, համապատասխան օրենքների կամ որոշումների հղումներով, տեղյակ պահել մերժման հիմքի մասին եւ տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

**Իմ կողմից նախընտրած ծանուցման ձեւը՝ Էլ.փոստն է:** Էլ.փոստի «Subject» բաժնում նշել համապատասխան «Subject»-ը, որտեղ կարտացուլի կառույցի անվանումը եւ պարոունակող փաստաթղթի տեսակը (օրինակ՝ Արարատի Համայնքապետարան Ուղղված Հարցման Պատասխան), ինչպես նաեւ՝ պատասխանը կցել «PDF» ձեւաչափով (անվորակ եւ ծուռմուտիկ սկանավորված փաստաթղթեր չուղարկել):

Ինչպես նաև հիշեցնեմ, որ ՀՀ վարչական դատարանը 2022 թվականի հունիսի 9-ին բավարարել է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հայցն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի տեղեկատվության ազատության իրավունքը խախտելու համար, հետևաբար հորդորում եմ Երևանի քաղաքապետարանի նման չխախտել տեղեկատվության ազատության իրավունքները (<http://www.foi.am/hy/news/item/2253/?fbclid=IwAR2wuXivKglKVaw09MUlJybMfHaqYzIMMnZpH2Uz4whZ3tmFJ8anTdOf3pE>):

Պատրաստ եմ վճարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանաչափը գերազանցող տեղեկության տրամադրման համար:

Դիմող՝

ԱՆԴՐԱՆԻԿ ՈՒԳՈՒԶՅԱՆ